

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10.1 հոդվածի 3-րդ մասի՝

1. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«մշակում և վարչապետին է ներկայացնում քաղաքաշինության բնագավառի զարգացումն ապահովող և գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր, օրենքով վերապահված իրավասության շրջանակում սահմանված կարգով ընդունում է նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտեր.»,

2. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«օրենքով սահմանված կարգով կազմակերպում և համակարգում է բնագավառի հանրապետական նորմատիվ փաստաթղթերի (բացի ազգային ստանդարտներից) մշակման աշխատանքները, միջպետական նորմատիվ փաստաթղթերի ընդունման և Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց գործարկման գործընթացի վարումը.»,

3. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«մշակում է քաղաքաշինական և լանդշաֆտային համակարգերի ներդաշնակեցման ծրագրեր, տարածական պլանավորման նորմեր ու կանոններ, տարբեր գործառական գոտիների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչներ.»,

4. 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հաստատում է շենքերի և շինությունների բազմակի օգտագործման օրինակելի ու փորձարարական նախագծեր, մեթոդական ցուցումներ, կանոններ, ուղեցույցեր, ձեռնարկներ, ձևաթղթեր, հարցաթերթեր և դրանք առաջադրում կիրարկման:»:

Հոդված 2. Օրենքի 14.3 հոդվածի 32-րդ մասում «2021 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «2024 թվականի հունիսի 30-ից» բառերով:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1. 1-ին պարբերության մեջ լսորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև նախագծման, իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմանները բառերը փոխարինել լսորմեր, կանոններ, ցուցանիշներ, նախագծային փաստաթղթերի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներ, ինչպես նաև նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում որակի ապահովման պայմանները բառերով,
2. 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը կազմում են քաղաքաշինական բնագավառի իրավական ակտերի համակարգի բաղկացուցիչ մասը, հաստատվում են քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից և հիմք են ծառայում փորձաքննության, քաղաքաշինական գործունեության վերահսկողության, վիճելի հարցերի լուծման համար:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: